

Ընտրութիւն Պատրիարքի Առաքելական Ս. Աթոռոյ

Համաձայն Ազգ. Սահմանադրութեան 1930 թուին բարեփոխեալ յօդուածներուն, երուսաղէմի Հայոց Պատրիարք կ'ընտրուի Ս. Յակոբեանց Ուխտի Միաբանական Ընդհ. Ժողովի կողմէ յաջորդական երկու նիստերու մէջ: Առաջին օրը կը կազմուի ընտրելեաց հնգանուն ցանկը. իսկ յաջորդ օր հնգանուն ցանկին վրայէն կ'ընտրուի պատրիարքը:

1956, Դեկտ. 19ին, յաղթահարելով յարուցուած ծանօթ խոչընդոտները, հնարաւոր եղած էր ձեռնարկել պատրիարքական ընտրութեան եւ կազմել կանոնական հնգանուն ցանկը հետեւեալներէ. Տեղապահ Գեորգ. Տ. Տիրան Արքեպս., Տ. Սուրեն Նպս., Տ. Հայկազուն Նպս., Տ. Շնորհիվ Նպս. եւ Տ. Զգօն Մ. Վրդ.:

Սակայն այն անձը որ եօթ տարիներ Ս. Աթոռը սուգի մէջ պահած էր, եւ վերջին ամիսներուն ալ իր անօրակելի արարներով

սազմադի մասնած էր վանքը, այդ միեւնոյն անձը չէր խղճահարած անհիմն դատաւարութեամբ պատրիարքականին դէմ, որուն հետեւանով յետագուած էր պատրիարքական ընտրութեան գործողութեան երկրորդ մասը:

Դատարարութեամբ ըլլալով Փետր. 13ին եւ Մարտ 10ին, Յորդանանու Արդարութեան Դեռադոյն Ասեանը իր վճիռը տուաւ, վերցնելով ընտրութեան արգելքը, Մարտ 19ին: Յաջորդ օր, Մարտ 20, Զորեմբաքի, գումարուեցաւ Միաբանական Ընդհ. Ժողով, ընտրելու Ս. Աթոռոյ նոր գահակալը: Ներկայ էին Ժողովի հրաւիրուած 24 անդամները լիւ: Ժողովը բացուեցաւ Ժամը ճիշդ 11ին: Բացման աղոթքէն վերջ Գեորգ. Տեղապահ Սրբազանը «Հոգւոց» արտասանեց երուսաղէմի հանգուցեալ պատրիարքաց հոգիներու յաւիտեական հանգիստին համար: Ապա կարդացուեցաւ Տեորէն Ժողովոյ հետեւեալ պաշտօնագիրը:

2429/15

20 Մարտ 1957

Դեռաւորհ

Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան

Բարեխնամ Պատր. Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ

եւ Նախագահ Պատրիարքի Միաբանական Ընդհանուր Ժողովոյ,
Ս. Աթոռ

Դեռաւորհ Սրբազան Հայր.

Անցեալ տարուան Դեկտեմբեր 20ի Միաբանական Ընդհանուր Ժողովը որ հրաւիրուած էր Պատրիարքական ընտրութեան համար, ընդհատուած էր Դեռաւորհ Ասեանին դրած արգելքին պատճառաւ:

Դեռաւորհ Ասեանը 19 Մարտին վճիռ արձակած ըլլալով որ իր առաւելութենէն դուրս է ջնջել Ներսիս Դործոց Նախարարութեան նախաջումը Ս. Աթոռոյ Տեղապահին, եւ վերջացած ըլլալով Պատրիարքական ընտրութեան արգելքը, Ժողովս որոշած է թէ համաձայն է որ այսօր Ժամը 11ին կատարուի Պատրիարքական ընտրութիւն:

Զայտսիկ հաղորդելով Ձեր Սրբազնութեան եւ Պատր. Միաբ. Ընդհ. Ժողովոյ, Մեծամի խոնարհ աղօթակից

Դիւան Տեորէն Ժողովոյ

ԶԱԽԻՆ ՎՐԴ. ԶԻՆԶԻՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊՍ. ԱՐԲԱՆԱՄԵԱՆ

Առնագալիք Տեորէն Ժողովոյ

Առնագալիք Տեորէն Ժողովոյ

Կատարուեցաւ զաղտնի փութակութիւն. 24 ներկաներու 20 փութներու բացարձակ առաւելութեամբ Գեորգ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսիսեան ընտրուեցաւ Պատրիարք Ե.

րուսաղէմի Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռոյ: Ասեանապետը յայտարարելէ յետոյ ընտրութեան արգիւնքը, ի դիմաց Միաբանական Ընդհ. Ժողովոյ շնորհաւորեց Նորին

Ամենապատուիրենք եւ մաղբեց որ Աստուծոյ օգնութեամբ եւ Միաբանութեան համագործակցութեամբ նորընտիր Պատրիարք ունենայ արդիւնատու պատշտութեան շրջան մը: Նորընտիր Պատրիարքը պատասխանեց խոր յուզումով եւ հետեւեալ հակիրճ խօսքերով. «Պատասխանատուութեան շահ ծանր զգացումով կը յայտնեմ իմ շնորհակալութիւն Միաբանութեանս բոլոր անդամներուն, իրենց ցոյց տուած վստահութեան համար: Կ'աղաչեմ որ աղօթքէ ինձի եւ Ս. Աթոռին համար»:

Միաբերան եւ արագեղ երգուեցաւ «Սիոնի որդիք, զարթիք, հարսին լուսոյ զուք աւեալիք» երգը Շնորհալիի: Մինչ այդ սկսած էին հնչել Մայր Տաճարի զանգակները եւ կոչնակները աւեսելով ամենքին նոր Պատրիարքին ընտրութիւնը, որուն ի լուր վաճառական ժողովուրդը եւ Սրբոց Թարգմանչաց ազգ. վարժարանի աշակերտութիւնը լեցուցած էին Սուրբ Յակոբայ զաւիրք: Երբ ժողովը աւարտեցաւ ժամը 11.20ին, Միաբան հայրերը մօտեցան աջահամբոյրի եւ



Ամեն. Պատրիարք Հայրը կ'օրհնէ Ազգային վարժարանի փոքրիկները:

շնորհաւորութեան՝ իրենց նորընտիր Պատրիարքին որ մի առ մի ողջագուրեց իր միաբանակից եղբայրները, որ այդ վայրկեանէն կը դառնային իր հոգեւոր զաւակները: Ապա Միաբանութիւնը քափօր կազմած եւ ի գլուխ ունենալով նորընտիր Պատրիարքը, առաջնորդեցին զայն Մայր Տաճար:

Պատրիարքարանի արտաքին մուտքին, զաւիրքին մէջ հաւաքուած ժողովուրդը իր ցրնուրիւնը արտայայեց արեւանդն ծափերով: Նորընտիր Պատրիարքը հանդիսական օրերու յատուկ քափօրով, եւ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ, մուտք գործեց Մայր Տաճարը որ լուսազարդուած էր եւ Մեծ պահոց առթիւ վարադուրուած Աւագ սեղանը բացուած էր: Ընտրեալ Պատրիարքը խնկարկեց շուրջանակի, եւ աղօթեց մատան մէջ: Թափօրը յառաջացաւ եկեղեցւոյ դասը ուր ըսուեցան եկեղեցիի մուտքի աղօթքները: Ապա Ամենապատուիրենք Պատրիարքը խօսեցաւ եկեղեցւոյ մէջ խնուած բազմութեան, աղնարկելով իր ընտրութեան որ զինք կը դնէր ծանր պատասխանատուութեան մը տակ: Յատկապէս յիշեց քիչ առաջ ըսուած Սաղմոսին սա համարը. «Տուր զօրութիւն ծառայի քո, կեցոյ զորդի աղախնոյ Քո, եւ արա՛ առ իս նշան բարութեան»: Յայտնեց իր զգացումները նաեւ ժողովուրդին, որ այս վերջին ամիսներու ընթացքին իր կարեւոր դերը ունեցած էր Սուրբ Աթոռոյ չազնապի բարւոք լուծման մէջ: Օրհնեց ամենքը եւ Միաբանք ու ժառանգաւորաց վարժարանի աշակերտութիւնը քափօր կազմած բազմաթիւ պատրիարքարան, երգելով Ս. Աթոռոյ պատշտական շարականը. «Օրհնեցէ՛ք զՏէր»: Այս անգամ ժողովուրդն ալ հետեւեցաւ քափօրին:

Պատրիարքարանի դահլիճին մէջ յանուն Միաբանութեան եւ ժողովուրդին, Տ. Սուրեն Սրբազան արտաբուխ ուղերձով մը շնորհաւորեց նորընտիր Պատրիարքը, որ պատասխանեց իրեն արթի զեղումով, յատկապէս երախտագիտութիւն յայտնելով Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան վեհապետ Հիւսէյն Բ.ի եւ անոր իմաստուն կառավարութեան իրենց արդարադատութեան համար:

Բոլորէն միաբերան երգուած «Հայր մեր»էն վերջ Պատրիարքարանի դահլիճը հաւաքուած ժողովուրդը եւ աշակերտութիւն մօտեցան աջահամբոյրի: Ժամը 12.30ն էր արդեն երբ վերջացաւ յաւեալ յիշատակելի եւ պատմական այս հանդիսութիւնը: